պիսի պատճառոյ փթթեցաւ գրեանք, կորեաւ պատմութիւնք, եղև անծանօթ 'ի յազգէ հայոց երջանկութիւն, ազատութեան ազգին իւրեանց և այլն, որպէս լուաք 'ի բերանոյ բազմաց թէ 'ի մէջ հարիւր արանց հայոց հազիւ մի այր գտանի զի լուեալ իցէ 'ի բերանէ յումեքէ եթէ ազգն հայոց ժամանակ ընդ ժամանակս էին տէր և թագաւոր 'ի վերայ երկրին Հայաստանեայց, այսպիսի տարաբախտութեամբ հեռանալով ամենայն բարութենէ, որ 'ի մէնջ և այսօր ճնալով մեր 'ի վերայ այս ոտից, որում տեսանես ազգ մի բոլոր սասանեալ, զի տոժէ յիս և ամենեցուն 'ի միտս առնողաց յոյժ, ես որ ոչ գտայ զիս 'ի տեղի ոչ ոք պաշտօնի, ոչ էկլէզիաստիկի և ոչ զինուորութեան և ոչ 'ի յերեսս երկրին հայոց ընակութիւն, որպէս բազմիցս 'ի մէնջ առաջ քան զիս և առաջ քան զնախնիս իմ պանդրխտացեալ 'ի հայաստանեայց հոգոց հանելով մեռան 'ի տարբ յաշխարհ և թաղեցին որդիքս և ժառանգս հայոց սիրտ Օտար հողի և 'ի յագարակս այլ ազգաց, որ սա ևս մի է 'ի անօրէնութեան մերոյ, որում տեսանեմք այժմ զիս 'ի նոյն ճանապարհի, վասն որոյ ոչ կարաց լռել բերանն և ոչ անփոխեաց գրիչն իմ այսքան, որ 'ի մտաց իմոց հասու գտայ և այսքան, որ 'ի ժամանակէ գործոյն իմոյ 'ի վերայ բանիս ծախել կարացի համարձակեցայ և շարեցի 'ի յայսմ, այլ լոյս